

վկայությունն է այն բանի, որ Դավրիժեցին մեջբերել է նամակի վերջին մասը:

Անշուշտ, պատմիչը թղթից ներբերվող հատվածը պատահական չի ընտրում, այն միշտ հաստատում-լրացում-բացատրում է վկայագրված իրադարձություններն ու անցքերը: Եվ, ընդհանրապես, թղթագտագործումը Դավրիժեցու պատմագրքում թելադրված է հայ պատմագրական երկերի մեծ մասին հատուկ՝ «մերթ փառացի վավերականության, մերթ գեղարվեստական-ոճական, մերթ էլ զուտ գաղափարական նկատառումներով»¹⁰: Քիչ չեն նաև դեպքերը, երբ այդ երեք նկատառումները համադրվում են:

Նույն կերպ՝ Դավրիժեցին վրաց թագավոր Լավասափի մոր՝ Շահ-Աբասին ուղղված պատասխան թղթի վերջին մասն է հարկ համարել օգտագործել իր պատմագրքում. կրկին բացակայում է թղթառաջքը, բայց առկա է թղթավերջը, ընդ որում՝ ներտեքստային մեկ այլ միավորի՝ **վերջողջույնի** («ողջ լեր») առկայությամբ. «Արդ՝ եթե ստուգիս զհաստատութիւն և զհանգիստն մեր կամիս, որպէս ասացեր, մի նեղեր զմեզ՝ և մի խռովեցուցեալ վրդովեր զխաղաղութիւնն մեր, այլ թող զմեզ կալ ի հանդարտութեան, զի այս փոքր իշխանութիւնս մեր բաւական է մեզ ի պէտս կարեաց մերոց. ողջ լեր» (էջ 125): Ի դեպ, վերջողջույնը հազվադեպ հանդիպող միավոր է Դավրիժեցու պատմագրքի թղթային ընդմիջարկումներում, իսկ «ողջ լեր»-ը գրեթե միակ կիրառվող ձևը:

Շատ հաճախ Դավրիժեցին հիշատակում է նամակային միավորների գրության, ուղարկման կամ ստանալու մասին, սակայն նույնիսկ հատվածական ներբերումներ չի կատարում: Մի առիթով, օրինակ, պատմիչը հիշատակում է Փիլիպպոս կաթողիկոսի գրած բազմաթիվ նամակների մասին. «Փիլիպպոս կաթողիկոսն բազում անգամ զանազան կերպիւ թուղթս գրեաց յիլով» (էջ 306): Նույն

կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում, բոլոր ընդգծումները մերճ են – Ա.Ն.:

¹⁰ **Աշոտ Ալեքսանյան**, Հայ միջնադարյան նամակը (IV–XIV դարեր), էջ 113: